# ԱԶԳԱՅԻՆ

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ.

Երևանի սուրբ Գայիանեան օր. երկդասեան ուսումնարանի տնտեսական հաշիւը 1889 թուից մինչև օրս չէ ներկայացրած ոչ հայ հասարակութեանը ամեն ուսումնական տարուայ վերջերին եղած հանդէսների ժամանակ և ոչ մամուլի միջոցով. իսկ այս տարի լրացնել կամենալով այդ պակասը, յունիսի 3-ին կայացած հանդիսումը կարդացի վերոնշանակեալ անցեալ և ներկայ թուերի տնտեսական հաշիւները, որով և ուղարկելով յարգելի խմբագրութեանդ Երևանի ս. Գայիանեան ուսումնարանի 1889—90. 1890—91. 1891—92 և այս 1892-93 ուսումնական տարիների տնտեսական համառօտ հաշիւը, խոնարհաբար խնդրում եմ տպագրութեան տեղ շնորհել «Արարատ» ամսագրում:

### ՀԱՇԻՒ

Երևանի եկեղեցական ծխական հայ օրիորդական ս. Գայիանեան ուսումնարանի.

1888—89 ուսումնական տարում ուսումնարանս հոգաբարձութիւն չունէր, այլ տնտեսական մասն հանգուցեալ Տ. Տ. Մակար Կաթուղիկոսի կոնդակով յանձնուած էր ուսումնական մասի տեսչութեան հետ բարեկրօն Յովսէփ աւագ քահանայ Մելեանին, տալով նրան օգնական ուսուցչական խումբը և կոչելով վարչութիւն ս. Գայիանեան ուսումնարանի. Վարչութեան անդամներն էին, Գարեգին քահանայ Խաչատրեանց, պ. Յովհաննէս Յովհաննիսեան, Տ. Աշխէն Տէր-Սարգսեան, օր. օր. Զարուհի Մելեան, Կատարինէ Մելիք-Աղամալեան. Բրաբիոն Տէր-Իսահակեանց, և Փեփրոնէ Տէր-Աստուածատրեանց. 1888—89 ուսումն. տարեվերջում ուսումնարանիս վարչութիւնը յանձնումէ նորընտիր հոգաբարձութեանը 3353 ռուբ. 40 կոպ., Այս գումարից ուսումնարանիս վերաբացման ժա-

մանակ, այն է՝ 1886—87 ուսումնական տարեսկզբին ստացուած է եղել իբրև մնացորդ գումար՝ 1295 ր. մուրհակներով, որոնք մինչև այժմ էլ մընում են մուրհակ. իսկ մնացած 2085 ր. 40 կոպէկը փարչութեան գործունէութեան արդիւնք։

## 1889—90 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ.

### Մուտք.

| | |
|---|---|
| Ստացուել է նախկին փարչութիւնից . . | 3353 ր. 40 կ. |
| Թոշակադրամներից և զանազան աղբիւրներից . | 3870 ր. 74 կ. |
| Ընդամենը | 7224 ր. 14 կ. |

### Ծախք.

| | |
|---|---|
| Ռոճիկ ուսուցչաց . . . . . | 2361 ր. — „ |
| Քարտուղարին . . . . . . | 100 ր. — „ |
| Ծառային . . . . . . . | 180 ր. — „ |
| Ուսումնարանի մի նոր սենեակ աւելացնելուն . | 906 ր. 29 կ. |
| Այլ և այլ ծախք . . . . . | 1252 ր. 26 կ. |
| Ընդամենը | 4799 ր. 55 կ. |

Ծախքը մուտքից դուրս գալով մնում է 2424 ր. 59 կոպէկ.

Այս ուսումնական տարում ձրի ծառայել են աւագ-ուսուցիչ բժ. պ. Լևոն Տիգրանեանց առանց դասերի *) և չորս կարգապահ վարժուհի՝ օր. օր. Հռիփսիմէ Յովհաննիսեան, Վարդանոյշ Աւետիքեան, Նունէ Տէր-Համբարձումեան, և մինչև փետրվար ամսոյ վերջը Սաթենիկ Ղազարեան. Իսկ այնուհետև նրա պաշտօնը շարունակում է գործել ձրի օր. Նազանի Մինասարեան։ Հոգաբարձութիւնը կազմուած է լինում հետևեալ անդամներից՝ Նախագահ Աստուածատուր աւագ-քահանայ Տէր-Խսահակեան. պ. Պօղոս Պօղոսեան (երեսփոխան), պ. Էմին Տէր-Գրիգորեան և պ. Յովսէփ Տէր Յովսէփեան։

---

*) Ծանօթ. 1890—91 ուսումնական տարուայ գործերից երևում է, որ բժ. Լևոն Տիգրանեանը դատարանով պահանջելիս է եղել հոգաբարձութիւնից տարեկան 600 ր. ռոճիկ և վերջացաւ հաշտութեամբ։

### 1890—91 ՈՒՍ. ՏԱՐԻ.

#### Մ ո ւ տ ք.

| | |
|---|---|
| Մնացորդ նախորդ տարուանից . . . | 2424 ր. 59 կ. |
| Թոշակագրամ և զանազան աղբիւրներից . . | 3303 ր. — » |
| Ը ն դ ա մ ե ն ը | 5727 ր. 59 կ. |

#### Ծ ա խ ք.

| | |
|---|---|
| Ռոճիկ ուսուցչաց Ա. կոպարով . . . | 2415 ր. — » |
| Կարգապահ վարժուհիներին . . . | 208 ր. 31 կ. |
| Քարտուղարին . . . . . | 100 ր. — » |
| Ծառային . . . . . . | 180 ր — » |
| Այլ և այլ ծախք . . . . . | 346 ր. 83 կ. |
| Ը ն դ ա մ ե ն ը | 3250 ր. 14 կ. |

Ծախքը մուտքից դուրս գալով մնում է 2477 ր. 45 կ.:

Այս թուականում ձրի ծառայել են՝ աւագ-ուսուցիչ պ. Յովհաննէս Յովհաննիսեան և կարգապահ վարժուհի օր. Վարսենիկ Տէր-Ղուկասեան:

Հոգաբարձութեան անդամներն էին՝ Աստուածատուր քահանայ Տէր-Խաչատրեան, պ. պ. Համբարձում Եղիազարեան (երեսփոխան) և Յովսէփ Տէր-Յովսէփեանց:

### 1891—92 ՈՒՍ. ՏԱՐԻ.

#### Մ ո ւ տ ք.

| | |
|---|---|
| Մնացորդ նախորդ տարուանից . . . | 2477 ր. 45 կ. |
| Թոշակագրամ և զանազան աղբիւրներից . . | 3340 ր. 69 կ. |
| Ը ն դ ա մ ե ն ը | 5818 ր. 14 կ. |

#### Ծ ա խ ք.

| | |
|---|---|
| Ռոճիկ ուսուցչաց Ա. կոպարով. . . . | 2815 ր. *) |
| Քարտուղարին . . . . . | 100 ր. — |
| Ծառային . . . . . . | 180 ր. — |
| Այլ և այլ ծախք . . . . . | 423 ր. 23 կ. |
| Ը ն դ ա մ ե ն ը | 3518 ր. 23 կ. |

Ծախսը մուտքից դուրս գալով մնում է 2299 ր. 91 կոպէկ:

*) Ծ ա ն օ թ. Մարտ ամսից թուաբանութեան ուսուցչի և ձեռագործութեան ուսուցչուհու փոփոխութեան պատճառով, Ա. կոպարով որոշուած ուսուցչաց ռոճիկ 2905 րուբլուց պակասեց 90 րուբլի:

Հոգաբարձութեան անդամներն էին՝ Նախագահ Գարեգին քահանայ Խաչատրեան, պ. Համբարձում Եղիազարեան (երեսփոխան) և պ. Յովսէփ Տէր-Յովսէփեան։

Հաշուից երևում է վարչութեան 1888—89 տարեվերջին հոգաբարձութեան յանձնուած 3353 ր. 40 կոպէկ գումարից երեք տարուայ շրջանում պակասել է 933 ր. 49 կոպէկ։

## ՆԵՐԿԱՅ 1892—93 ՈՒՍՈՒՄ. ՏԱՐԻ.

### Մ ո ւ տ ք.

| | |
|---|---|
| Անցեալ տարուայ մնացած փողով և պարտամուրհակներով | 2419 ր. 91 կ. |
| Թոշակագրամ աշակերտուհիներից . . . | 2945 ր. — » |
| Պարահանդէսից . . . . . . | 1200 ր. — » |
| Պօղոս Պետրոս եկեղեց. նպաստ. . . . | 200 ր. — » |
| Դրամագլխի տոկոսիք . . . . . | 233 ր. 94 կ. |
| Նուէրներ . . . . . . . | 312 ր. 65 կ. |
| Ծննդական վկայականներից . . . . | 172 ր. — » |
| Ռուս թատերասէր Օմարսկու խմբի ներկայացումից . | 60 ր. 40 կ. |
| Ուսումնարանի հին կարասիքների վաճառումից *) . | 163 ր. — » |
| Դասական պիտոյքների վաճառումից . . . | 115 ր. — » |
| Ձեռագործի նիւթերի վաճառումից . . . | 209 ր. 55 կ. |
| Ը ն դ ա մ ե ն ը | 8031 ր. 45 կ. |

### Ծ ա խ ք.

| | |
|---|---|
| Ռոճիկ թեմական տեսչի . . . . . | 35 ր. — » |
| Ռոճիկ ուսուցչաց . . . . . . | 2914 ր. 88 կ. |
| Քարտուղարի . . . . . . | 100 ր. — » |
| Ծառայի . . . . . . . | 135 ր. — » |
| Վառելափայտի . . . . . . | 134 ր. — » |

Արժանապատիւ թեմ. տեսուչ Հայր Մելեանի բանաւոր թոյլտուութեամբ ուսումնարանիս համար գնուեց 68 հատ նոր ձևի նստարաններ, 5 հատ ամբիոն իրենց պատուանդաններով, 3 հատ գրատախտակ, աթոռ, փոշամաններ դասարանների համար, կախարաններ, քարգահ, 2 հատ պահարան

*) Ծ ա ն օ թ.։ Ուսումնարանի հին նստարաններից տասն հատ վաճառուել է թեմ. դպրանոցի Հոգաբարձութեանը, ամեն մէկը 7 րուբլի 50 կոպէկով. ընդամենն եօթանասուն և հինգ րուբլի, որը թեմական դպրանոցի հոգաբարձութիւնը չէ հատուցել մինչև ցայսօր։

ձկը մատենադարանի համար, միւսը ֆիզիքական կաբինետի և մարդակազմական գործիքների համար. վճարուեց . . . 552 ր. 80 կ.

Ձեռագործութեան համար նիւթերի . . . 57 ր. 82 կ.

Դիւանական և զանազան մանր ծախք . . . 75 ր. 63 կ.

Գարնանը ջրերը պղտոր լինելու պատճառաւ Թիջրապագից բերած աղբիւրի ջրին և աշակերտուհիների առողջապահութեան համար կարբոլեան թթուի տրուեց . . . . . . 2 ր. 50 կ.

Ընդամենը 4005 ր. 13 կ.

Ծախքը մուտքից դուրս գալով մնում է 1606 ր.—41 կպ +2419 ր. 91 կ. =4026 ր. 32 կպ. Հոգաբարձութեան անդամներն են. Նախագահ՝ Գարեգին քահ. Խաչատրեան և պ. Համբարձում Եղիազարեանց (երեսփոխան)։ Տնտեսական գործերը գլխաւորապէս ծանրանում էին նախագահիս վրայ, որ օգնական ունենալով աւագ—ուսուցչին և ուսուցչական խմբին, վարեցի պաշտօնս մինչև տարուայ վերջը կարեացս չափով։

Պարտք ենք համարում յայտնել մեր խորին շնորհակալութիւնը ուսումնարանիս վարչութեան անդամներին և մեծ. աւագ-ուսուցիչ պ. Ներսէս Սիմէօնեանցին, պարկեշտասուն Տ. Սոնա Գեղամեանցին, Տ. Ցաթենիկ Արտեմեանին, Տ. Աննա Հասան Ջալալեանին, Տ. Վարդուհի Անդրէասեանին, Տ. Կատարինէ Եղիազարեանին, մեծ. արքայազն Դարաբ Շահ Ռուհ Միրզային, պ. Կարապետին Կամսարական, բժ. Ա. Սիմէօնեանց, բժ. Ջ. Անդրէասեան, պ. Թ. Քալանթարեան, պ. Ց. Սարուխանբէկեան և գնդապետ պ. Դարկինին, որոնք իրանց եռանդուն մասնակցութեամբ ուսումնարանիս օգտին եղած պարահանդէսը սովորականից աւելի արդիւնաւոր դարձրին։

Նախագահ հոգաբարձութեան՝ ԳԱՐԵԳԻՆ ՔՀՆ. ԽԱՉԱՏՐԵԱՆՑ.

9 Յունիսի 1895 Թ.

Երևան։